Հայաստանի Հանրապետություն

Արմավիրի մարզ
գ. Հայկաշեն

N-33

«5» մայիսի 2011թ

Արմավիրի մարզպետ պարոն
Ա. Ղահրամանյանին

Հարգարժան պարոն Ղահրամանյան

Կից ներկայացվում է Արմավիրի մարզի Հայկաշենի գյուղական համայնքի ղեկավարի «2009թվականի փետրվարի 20-ի N-02 որոշման մեջ փոփոխություն կատարելու և համայնքի ղեկավարի 2010 թվականի ապրիլի 5-ի N-04 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին » N-02 որոշումը՝ հավելվածով:

Առ դիր 5 թերթ:

Համայնքի ղեկավար Ա. Հովհաննիսյան

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
Մուտք թիվ 5047-11
«11» 05 2011 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

ՀԱՅԿԱՇԵՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

N-02

2011 թվականի մայիսի «2»

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2009 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 20-ի N-02 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 5-ի N-04 ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Համայնքային ծառայության մասին » Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածով, «Իրավական ակտերի մասին » Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով, 72-րդ հոդվածի առաջին մասի 1-ին կետի «բ» ենթակետով և հիմք ընդունելով Արմավիրի մարզպետի 2010թվականի մարտի 22-ի թիվ 01/07.2/298-10 և 2011թվականի ապրիլի 15-ի թիվ 01/07/1162-11 գրությունները՝

որոշում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Հայկաշենի գյուղական համայնքի ղեկավարի 2009թվականի փետրվարի 20-ի «Համայնքային ծառայության պաշտոնների անձնագրերը հաստատելու մասին» N-02 որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը.

1) Որոշման N-1 հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

2. ՈՒԺը կորցրած ճանաչել համայնքի ղեկավարի 2010 թվականի ապրիլի 5-ի «Համայնքային ծառայության անձնագրերը հաստատելու մասին » N –04 որոշումը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Համայնքի ղեկավար Հ. Հովհաննիսյան

2011 թվականի մայիսի « 2 »

գ. Հայկաշեն